Luys Lnyu®

ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ-ՄԱՅԻՍ ԱՄԻՍՆԵՐԻՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ 1
   1.1. Արդյունաբերություն 2
   1.2. Շինարարություն 4
   1.3. Ծառայություններ 4
   1.4. Առևտուր 5
2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ 6
3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ 8
4. ՓՈԽԱՐԺԵՔ 9
5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ 10
   5.1. Պետական բյուջեի եկամուտները 10
   5.2. Բյուջեի ծախսերը 11
   5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը 12
   5.4. Կառավարության պարտք 12
6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ 13
   6.1. Գնաճ 13
   6.2. Ավանդներ 14
   6.3. Վարկեր 15
   6.4. Դրամական փոխանցումներ 17
7. ԱՄՓՈՓՈՒՄ 17

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

2026թ. հունվար-մայիս ամիսներին տնտեսական ակտիվությունը շարունակել է պահպանվել բարձր մակարդակում՝ մայիսին արձանագրելով աճի տեմպի էական արագացում: Մայիսին տնտեսական ակտիվության ցուցանիշի (ՏԱՑ-ի) 12-ամսյա աճը կազմել է շուրջ 11.7%՝ ապրիլի 7.1%-ի համեմատ զգալիորեն արագանալով, ինչի արդյունքում հունվար-մայիս ամիսների կուտակային աճը հասել է 8.0%-ի՝ հունվար-ապրիլի 6.9%-ի դիմաց: Աճի տեմպի արագացումը հիմնականում պայմանավորված է ծառայությունների նպաստման մեծացմամբ:

Գծապատկեր 1. Տնտեսական ակտիվության ցուցանիշը, կուտակային[1], %



2026թ. հունվար-մայիս ամիսներին տնտեսական ակտիվության աճի հիմնական աղբյուրները եղել են արդյունաբերությունը և ծառայությունները՝ համապատասխանաբար 3.1 և 2.8 տոկոսային կետ նպաստումներով: Շինարարությունը ևս պահպանել է դրական ազդեցությունը՝ ապահովելով 1.5 տոկոսային կետ նպաստում: Առևտրի նպաստումը համեմատաբար փոքր է եղել՝ կազմելով 0.6 տոկոսային կետ:

[1] Նախորդ ամիսների ՏԱՑ-ի ամսական ցուցանիշները վերանայվել են ՀՀ ՎԿ կողմից:

Գծապատկեր 2. Տնտեսական ակտիվության ցուցանիշը և ճյուղերի նպաստումները 2026թ. հունվար-մայիս ամիսներին, տոկոսային կետ[2]



1.1. Արդյունաբերություն

Գծապատկեր 3. Արդյունաբերության համախառն թողարկման իրական կուտակային աճը, %



Արդյունաբերության ոլորտում աճի տեմպը մայիսին որոշակիորեն դանդաղել է: 2026թ. մայիսին արդյունաբերության թողարկման 12-ամսյա աճը կազմել է 9.5%՝ ապրիլի 11.7%-ի համեմատ: Արդյունքում՝ հունվար-մայիս ամիսների կուտակային աճը կազմել է 12.2%՝ հունվար-ապրիլի համեմատ դանդաղելով 0.8 տոկոսային կետով: Չնայած աճի տեմպի որոշակի դանդաղմանը՝

[2] Նպաստումների հաշվարկն իրականացվել է ՏԱՑ-ի՝ 2025թ. տարեկան կշիռների հիման վրա: Տարեկան և ամսական կշիռների տարբերությունների պատճառով առաջացող մնացորդը բաշխվել է ոլորտների միջև՝ նորմավորելով ըստ նպաստումների չափերի:

արդյունաբերությունը շարունակում է մնալ տնտեսական ակտիվության աճին ամենամեծ նպաստումն ունեցող ճյուղը:

Հունվար-ապրիլ[3] ամիսների տվյալներով՝ արդյունաբերության աճը հիմնականում ապահովվել է հանքարդյունաբերության և մշակող արդյունաբերության հաշվին: Հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման թողարկումն աճել է 35.4%-ով՝ ընդհանուր արդյունաբերության աճին նպաստելով շուրջ 5.9 տոկոսային կետով: Մշակող արդյունաբերության աճը կազմել է 8.9%, իսկ դրա նպաստումը՝ շուրջ 5.9 տոկոսային կետ: Դրական նպաստում է ունեցել նաև «էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում» ենթաոլորտը՝ շուրջ 1.2 տոկոսային կետով, իսկ «ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում» ենթաոլորտի ազդեցությունը եղել է փոքր՝ շուրջ 0.04 տոկոսային կետ:

Հանքարդյունաբերության աճը հիմնականում պայմանավորված է եղել մետաղական հանքաքարի արդյունահանման 39.2% աճով: Մշակող արդյունաբերության մեջ առավել մեծ դրական նպաստում են ունեցել «հիմնական մետաղների արտադրություն», «քիմիական նյութերի և քիմիական արտադրատեսակների արտադրություն», «սննդամթերքի արտադրություն» և «խմիչքների արտադրություն» ենթաոլորտները, որոնց նպաստումները մշակող արդյունաբերության աճին կազմել են համապատասխանաբար շուրջ 4.2, 1.8-ական և 1.2 տոկոսային կետ: Դրական նպաստում ունեցած ենթաոլորտների շարքում առանձնացել է նաև «արտադրատեսակների արտադրություն՝ չներառված ուրիշ խմբավորումներում» ենթաոլորտը՝ շուրջ 0.9 տոկոսային կետ նպաստմամբ, որտեղ աճը հիմնականում կապված է ոսկերչական արտադրատեսակների արտադրության բարձր աճի հետ:

Միևնույն ժամանակ, մշակող արդյունաբերության որոշ ենթաոլորտներ ունեցել են բացասական ազդեցություն ընդհանուր աճի վրա: Առավել նշանակալի բացասական նպաստումներ են արձանագրվել «ծխախոտային արտադրատեսակների արտադրություն» և «մեքենաների և սարքավորանքի արտադրություն՝ չներառված ուրիշ խմբավորումներում» ենթաոլորտներում, որոնք մշակող արդյունաբերության աճին հակազդել են համապատասխանաբար շուրջ 1.4 և 1.0 տոկոսային կետով:

[3] Արդյունաբերության մայիս ամսվա տվյալները՝ ըստ ենթաոլորտների, դեռևս չեն հրապարակվել:

1.2. Շինարարություն

Գծապատկեր 4. Շինարարության իրական կուտակային աճը, %



Շինարարության ոլորտում բարձր աճի տեմպերը շարունակվել են նաև մայիսին: 2026թ. մայիսին շինարարության ծավալների 12-ամսյա աճը կազմել է 27.1%՝ ապրիլի 24.7%-ի համեմատ: Արդյունքում՝ հունվար-մայիս ամիսների կուտակային աճը հասել է 24.1%-ի՝ հունվար-ապրիլի 22.9%-ի դիմաց: Ոլորտի բարձր աճը պահպանվում է նախորդ տարվա բարձր բազայի պայմաններում, ինչպես նաև այն սպասումների ֆոնին, որ Երևանի մասով հիպոթեքային վարկերի տոկոսավճարների վերադարձի ծրագրի ավարտից հետո շինարարության աճի տեմպերը պետք է աստիճանաբար թուլանային: Ավելին՝ շինարարության ոլորտում կարող է որոշակի լրացուցիչ պահանջարկ ձևավորվել արտաքին աշխատանքային միգրացիայի պայմանների փոփոխության դեպքում:

1.3. Ծառայություններ

Գծապատկեր 5. Ծառայությունների իրական կուտակային աճը, %



Ծառայությունների ոլորտում աճի տեմպը մայիսին էականորեն արագացել է՝ պահպանելով կայուն դրական դինամիկան: 2026թ. մայիսին ծառայությունների 12-ամսյա աճը կազմել է 14.7%՝ ապրիլի 9.1%-ի համեմատ զգալիորեն արագանալով, ինչի արդյունքում հունվար-մայիս ամիսների կուտակային աճը հասել է 9.1%-ի՝ հունվար-ապրիլի 7.6%-ի դիմաց:

Հունվար-ապրիլ ամիսների տվյալներով՝[4] ծառայությունների ոլորտի աճը հիմնականում ապահովվել է «տեղեկատվություն և կապ» և «տրանսպորտ» ենթաոլորտների հաշվին, որոնց նպաստումները ծառայությունների ընդհանուր աճին կազմել են համապատասխանաբար շուրջ 2.9 և 1.7 տոկոսային կետ: Նշանակալի դրական ազդեցություն են ունեցել նաև կացության և հանրային սննդի կազմակերպման, վարչարարական և օժանդակ գործունեության, մշակույթի, զվարճությունների և հանգստի, ինչպես նաև մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեության ծառայությունները: Միևնույն ժամանակ, ֆինանսական և ապահովագրական գործունեության, ինչպես նաև կրթության ծառայությունների գծով արձանագրվել է նվազում, որը որոշ չափով զսպել է ծառայությունների ոլորտի ընդհանուր աճը (ընդհանուր՝ 0.2 տոկոսային կետով):

1.4. Առևտուր

Գծապատկեր 6. Առևտրի ծավալների իրական կուտակային աճը, %



Առևտրի ոլորտում աճի տեմպը մայիսին շարունակել է մնալ թույլ: 2026թ. մայիսին առևտրի ծավալները նախորդ տարվա նույն ամսվա համեմատ գրեթե չեն աճել՝ 0.0%, ինչի հետևանքով հունվար-մայիս ամիսների կուտակային աճը կազմել է 1.2%՝ հունվար-ապրիլի համեմատ դանդաղելով 0.3 տոկոսային կետով:

[4] Ծառայությունների ոլորտի՝ ըստ ենթաոլորտների, մայիս ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ[5]

Գծապատկեր 7. Արտահանման կուտակային աճը, %



Արտահանման դինամիկան մայիսին շարունակել է մնալ բացասական, թեև անկման տեմպը նախորդ ամսվա համեմատ որոշակիորեն մեղմվել է: 2026թ. մայիսին արտահանման ծավալները նվազել են 11.5%-ով՝ ապրիլի 22.8% անկման համեմատ, ինչի հետևանքով հունվար-մայիս ամիսների կուտակային ցուցանիշը մնացել է բացասական՝ կազմելով -3.7%՝ հունվար-ապրիլի -1.9%-ի դիմաց: **Սա վկայում է, որ տարեսկզբի առանձին ամիսներին արձանագրված վերականգնումը կայուն բնույթ չի կրել, իսկ արտահանման դինամիկան շարունակում է մեծապես կախված մնալ առանձին ապրանքախմբերի և վերաարտահանման հետ կապված գործոններից:**

Հունվար-ապրիլ ամիսների տվյալներով՝[6] արտահանման նվազումը հիմնականում պայմանավորված է եղել «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի արտահանման 44.8% անկմամբ, որի բացասական նպաստումը ընդհանուր արտահանման աճին կազմել է շուրջ 15.4 տոկոսային կետ: Արտահանման վրա բացասական ազդեցություն է ունեցել նաև «մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ» ապրանքախումբը, որի արտահանումը նվազել է 8.8%-ով՝ ընդհանուր ցուցանիշին հակազդելով շուրջ 1.5 տոկոսային կետով: Միևնույն ժամանակ, արտահանման նվազումը զգալիորեն մեղմվել է «հանքահումքային արտադրանք» ապրանքախմբի 90.3% աճի հաշվին, որի դրական նպաստումը կազմել է շուրջ 11.6 տոկոսային կետ: Դրական նպաստում են ունեցել նաև «պատրաստի սննդի արտադրանք» և «քիմիայի և դրա

[5] Արտահանման և ներմուծման 2026թ. նախորդ ամսվա ցուցանիշները վերանայվել են ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից:
[6] Արտահանման՝ մայիս ամսվա՝ ըստ ապրանքատեսակների, տվյալները դեռևս չեն հրապարակվել:

հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք» ապրանքախմբերը՝ համապատասխանաբար շուրջ 1.1 և 0.4 տոկոսային կետով:

Գծապատկեր 8. Ներմուծման կուտակային աճը, %



Ներմուծման դինամիկան մայիսին շարունակել է մնալ թույլ, թեև անկման տեմպը նախորդ ամսվա համեմատ մեղմվել է: 2026թ. մայիսին ներմուծման ծավալները նվազել են 1.6%-ով՝ ապրիլի 3.4% անկման համեմատ: Արդյունքում՝ հունվար-մայիս ամիսների կուտակային աճը դանդաղել է մինչև 2.2%՝ հունվար-ապրիլի 3.2%-ի դիմաց: Ներմուծման դինամիկան, ինչպես արտահանման դեպքում, շարունակում է մնալ անկայուն, իսկ տարեսկզբին գրանցված բարձր աճերը չեն վերածվել կայուն միտման:

Հունվար-ապրիլ ամիսների տվյալներով[7]՝ ներմուծման աճին առավել մեծ դրական նպաստում են ունեցել «մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ», «պատրաստի սննդի արտադրանք», «քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք», «վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ» և «հանքահումքային արտադրանք» ապրանքախմբերը, որոնց ընդհանուր նպաստումը կազմել է շուրջ 12.6 տոկոսային կետ: Դրանցից ամենամեծը եղել է «մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ» ապրանքախմբի նպաստումը՝ շուրջ 3.9 տոկոսային կետ: Միևնույն ժամանակ, ներմուծման ընդհանուր աճը զգալիորեն զսպվել է «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի 57.5% անկման հետևանքով, որի բացասական նպաստումը կազմել է շուրջ 11.1 տոկոսային կետ:

[7] Ներմուծման՝ մայիս ամսվա՝ ըստ ապրանքատեսակների, տվյալները դեռևս չեն հրապարակվել:

3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ[8]

Անվանական աշխատավարձի աճի տեմպը կտրուկ արագացել է հատկապես պետական հատվածում: Միջին ամսական անվանական աշխատավարձն ընդհանուր տնտեսությունում 2026 թվականի հունվար-ապրիլ ամիսներին նախորդ տարվա նույն ամիսների համեմատ աճել է 4.6%-ով (հունվար-մարտին աճի տեմպը կազմել էր 2.9%)՝ կազմելով 309.1 հազ. դրամ: Ոչ պետական հատվածում միջին ամսական անվանական աշխատավարձի աճի տեմպն ավելի ցածր է եղել՝ կազմելով 3.5% (հունվար-մարտի աճը՝ 1.7%), իսկ անվանական աշխատավարձի չափը կազմել է 336.3 հազ. դրամ: Պետական հատվածում աշխատավարձի աճը կտրուկ արագացել է՝ հասնելով 8.3%-ի (հունվար-մարտի աճը՝ 6.9%)՝ կազմելով 238.4 հազ. դրամ: **Հատկանշական է, որ պետական հատվածի աշխատավարձերի կտրուկ աճը գրանցվել է հենց նախընտրական ամիսներին:**

Գծապատկեր 9. Միջին ամսական անվանական աշխատավարձի աճը 2025-2026թթ. հունվար-ապրիլին, %



[8] Աշխատավարձի ցուցանիշը հաշվարկվում է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացվող (հաշվետու ամսվան հաջորդող 25/26-րդ օրը) եկամտային հարկի և սոցիալական վճարի հաշվառման տվյալների բազայի հիման վրա և հրապարակվում է ՀՀ ՎԿ կողմից՝ յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրը: Հետևաբար, 2026թ. մայիս ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

4. ՓՈԽԱՐԺԵՔ

Գծապատկեր 10. Անվանական փոխարժեքի միտումները, 12-ամսյա աճը (%, աճը նշանակում է ՀՀ դրամի արժևորում) և միջին ամսական անվանական փոխարժեքը (դրամ)



2026թ. մայիսին ՀՀ դրամը նախորդ տարվա համեմատ արժևորված է եղել ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ, իսկ ՌԴ ռուբլու նկատմամբ՝ արժեզրկված: 2026թ. մայիսին ՀՀ դրամի միջին փոխարժեքն ԱՄՆ դոլարի նկատմամբ կազմել է 368.6 դրամ՝ նախորդ տարվա մայիսի համեմատ նվազելով 18.0 դրամով: Եվրոյի նկատմամբ փոխարժեքը կազմել է 430.4 դրամ՝ նախորդ տարվա մայիսի համեմատ նվազելով 5.7 դրամով: ՌԴ ռուբլու նկատմամբ ՀՀ դրամը նույն ժամանակահատվածում արժեզրկվել է՝ կազմելով 5.1 դրամ և նախորդ տարվա մայիսի համեմատ աճելով 0.3 դրամով: Հունվար-մայիս ամիսներին ՀՀ դրամի արժևորումն ԱՄՆ դոլարի նկատմամբ կազմել է 4.6%, իսկ եվրոյի և ՌԴ ռուբլու նկատմամբ դրամն արժեզրկվել է համապատասխանաբար 3.3%-ով և 8.6%-ով:

5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ

5.1. Պետական բյուջեի եկամուտները

Պետական բյուջեի ընդհանուր եկամուտների կուտակային աճի տեմպն արագացել է: 2026թ. մայիսին պետական բյուջեի ընդհանուր եկամուտների աճը կազմել է 20.0%՝ ապրիլի համեմատ արագանալով 3.7 տոկոսային կետով, իսկ հունվար-մայիս ամիսներին բյուջեի ընդհանուր եկամուտներն աճել են 14.7%-ով՝ հունվար-ապրիլի համեմատ արագանալով 1.0 տոկոսային կետով:

Եկամուտների աճի տեմպի արագացումը հիմնականում պայմանավորված է եղել ոչ հարկային եկամուտների աճով: Վերջինս նախորդ ամսվա 12.5% անկումից հունվար-մայիսին գրանցել է 11.2% աճ, իսկ նպաստումն ընդհանուր եկամուտների աճին -0.5-ից դարձել է 0.5 տոկոսային կետ: Նույն ժամանակահատվածում պաշտոնական դրամաշնորհներն աճել են 2.2 անգամ՝ շուրջ 3.3 մլրդ դրամով:

Գծապատկեր 11. Հարկային եկամուտների կուտակային աճը, %



Հարկային եկամուտների աճը հունվար-մայիս ամիսներին կազմել է 14.6%: Հարկային եկամուտների աճին ամենամեծ նպաստումն է ունեցել եկամտային հարկը՝ աճելով 12.3%-ով և ընդհանուր հարկային եկամուտների աճին նպաստելով 3.2 տոկոսային կետով: Նշանակալի դրական նպաստում են ունեցել նաև շահութահարկը և ԱԱՀ-ն, որոնց աճը կազմել է համապատասխանաբար 12.0% և 8.1%, իսկ նպաստումները՝ 2.7 և 2.4 տոկոսային կետ: Բնապահպանական և բնօգտագործման վճարների գծով մուտքերը ևս էականորեն աճել են՝ 180.6%-ով՝ ապահովելով 2.0 տոկոսային կետ նպաստում: Պետական տուրքերի աճը կազմել է 49.7%, ինչի արդյունքում դրանց նպաստումը ընդհանուր հարկային եկամուտների աճին կազմել է 1.4 տոկոսային կետ:

Աղյուսակ 1. Հարկային եկամուտները և պետական տուրքերը՝ ըստ եկամտատեսակների

	2025թ. Հունվար-մայիս		2026թ. Հունվար-մայիս	
	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ
Ընդամենը հարկային եկամուտներ և պետական տուրք	**14.4**	**14.4**	**14.6**	**14.6**
Ավելացված արժեքի հարկ	26.4	7.2	8.1	2.4
Ակցիզային հարկ	10.4	0.5	17.0	0.8
Շահութահարկ	18.1	3.9	12.0	2.7
Պետական տուրք	21.1	0.6	49.7	1.4
Մաքսատուրք	0.9	0.0	-5.4	-0.1
Բնապահպանական և բնօգտագործման վճարներ	-57.1	-1.7	180.6	2.0
Այլ հարկեր	-4.1	-0.1	36.3	1.0
Շրջանառության հարկ	24.6	0.7	18.1	0.6
Եկամտային հարկ	9.9	2.7	12.3	3.2
Սոցիալական վճարումներ	14.3	0.6	14.5	0.6

5.2. Բյուջեի ծախսերը

Գծապատկեր 12. Պետական բյուջեի ծախսերը և դրա բաղադրիչները, մլրդ դրամ



Ի տարբերություն եկամուտների՝ պետական բյուջեի ծախսերի աճի տեմպը դանդաղել է: Պետական բյուջեի ընդհանուր ծախսերը 2026թ. մայիսին 6.1%-ով նվազել են նախորդ տարվա նույն ամսվա համեմատ՝ հիմնականում

պայմանավորված կապիտալ ծախսերի նվազմամբ: Արդյունքում հունվար-մայիս ամիսներին բյուջեի ծախսերի աճը դանդաղել է՝ հասնելով 4.5%-ի՝ հունվար-ապրիլի 7.6%-ից:

Նույն ժամանակահատվածում ընթացիկ ծախսերն աճել են 15.2%-ով՝ ընդհանուր ծախսերի աճին ունենալով 12.6 տոկոսային կետ դրական նպաստում, իսկ կապիտալ ծախսերը կրճատվել են 46.8%-ով՝ ընդհանուր ծախսերի աճին հակազդելով 8.0 տոկոսային կետով:

5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը

Գծապատկեր 13. Պետական բյուջեի հավելուրդը / պակասուրդը (-), մլրդ դրամ



Պետական բյուջեն հունվար-մայիս ամիսներին պահպանել է հավելուրդային դիրքը, թեև հավելուրդի չափը նախորդ ամսվա համեմատ նվազել է: 2026թ. հունվար-մայիս ամիսներին եկամուտների և ծախսերի վերոնշյալ դինամիկայի պայմաններում ձևավորվել է պետական բյուջեի շուրջ 95.8 մլրդ դրամ հավելուրդ՝ հունվար-ապրիլի 125.8 մլրդ դրամի դիմաց: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում պետական բյուջեն եղել է պակասուրդային՝ շուրջ 23.2 մլրդ դրամի չափով, ինչի համեմատ բյուջեի հաշվեկշիռը բարելավվել է շուրջ 119.0 մլրդ դրամով:

5.4. Կառավարության պարտք

ՀՀ կառավարության պարտքի անվանական մակարդակը նախորդ ամսվա համեմատ փոքր չափով աճել է, ինչպես նաև պահպանվել է նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճի միտումը: 2026թ. մայիսի վերջի դրությամբ ՀՀ կառավարության պարտքի ծավալը կազմել է 13,884.1 մլն ԱՄՆ դոլար՝ ապրիլի համեմատ աճելով շուրջ 59.1 մլն ԱՄՆ դոլարով: Նախորդ տարվա մայիսի համեմատ կառավարության պարտքն աճել է 5.2%-ով, ընդ որում՝ աճի տեմպն ապրիլի ցուցանիշի համեմատ դանդաղել է 0.7 տոկոսային կետով: Նույն

ժամանակահատվածում ներքին պարտքի աճը կազմել է 1.8%, իսկ արտաքին պարտքինը՝ 4.1%:

Գծապատկեր 14. ՀՀ կառավարության պարտքի (ԱՄՆ դոլարով) 12-ամսյա աճը, %



Պետական գանձապետական պարտատոմսերի տոկոսադրույքները նախորդ տարվա համեմատ շարունակել են նվազել, թեև որոշակի աճի միտումներ նկատվել են: 2026թ. մայիսին պետական կարճաժամկետ և միջնաժամկետ պարտատոմսերի եկամտաբերությունները կազմել են համապատասխանաբար 6.8% և 8.0%՝ նախորդ տարվա նույն ամսվա համեմատ նվազելով համապատասխանաբար 1.2 և 1.7 տոկոսային կետով: Սակայն ապրիլի համեմատ միջնաժամկետ պարտատոմսերի եկամտաբերությունն աճել է 0.25 տոկոսային կետով:

6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

6.1. Գնաճ

Գծապատկեր 15. 12-ամսյա գնաճ, %



Գնաճի տեմպը մայիսին որոշակիորեն դանդաղել է, սակայն շարունակում է մնալ համեմատաբար բարձր մակարդակում: 2026թ. մայիսին 12-ամսյա գնաճը կազմել է 4.2%՝ ապրիլի 5.3%-ի համեմատ նվազելով 1.1 տոկոսային կետով: Չնայած մայիսին արձանագրված դանդաղմանը՝ գնաճային միջավայրը դեռևս մնում է ուշադրության կենտրոնում՝ հատկապես հաշվի առնելով նախորդ ամիսներին սննդամթերքի և տրանսպորտային ծառայությունների գների աճի ազդեցությունը: Կենտրոնական բանկը դեռևս չի փոխել դրամավարկային քաղաքականության ուղղությունը՝ հունիսին քաղաքականության տոկոսադրույքը պահպանելով 6.5% մակարդակում:

6.2. Ավանդներ

Գծապատկեր 16. Ավանդների 12-ամսյա աճը, %



Ավանդների աճի տեմպը մայիսին կրկին արագացել է՝ շարունակելով գտնվել բարձր մակարդակում: 2026թ. մայիսին ավանդների ընդհանուր ծավալը նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճել է 17.5%-ով՝ ապրիլի 15.9%-ի դիմաց: Աճը շարունակել է պայմանավորվել ռեզիդենտներից ներգրավված ավանդների ավելացմամբ, որոնց աճը կազմել է 24.2%, մինչդեռ ոչ ռեզիդենտներից ներգրավված ավանդների ծավալը նվազել է 3.3%-ով:

Գծապատկեր 17. Տնտեսության հատվածների նպաստումներն ավանդների աճին, տոկոսային կետ



2026թ. մայիսին ավանդների աճն առավելապես պայմանավորված է եղել տնային տնտեսություններից ներգրավված ավանդների ավելացմամբ, որի նպաստումը կազմել է շուրջ 9.6 տոկոսային կետ: Նշանակալի դրական նպաստում են ունեցել նաև ձեռնարկություններից և այլ ֆինանսական կազմակերպություններից ներգրավված ավանդները՝ համապատասխանաբար 4.2 և 3.6 տոկոսային կետով: Միևնույն ժամանակ, ոչ ռեզիդենտներից ներգրավված ավանդների նվազումը շարունակել է զսպել ընդհանուր աճը՝ հակազդելով շուրջ 0.8 տոկոսային կետով:

6.3. Վարկեր[9]

Վարկերի աճի տեմպը շարունակել է արագանալ: ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին և ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի ընդհանուր ծավալը 2026թ. մայիսին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճել է 25.2%-ով՝ ապրիլի համեմատ արագանալով 3.0 տոկոսային կետով: Աճը պայմանավորված է եղել ինչպես ռեզիդենտներին, այնպես էլ ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի ավելացմամբ, որոնք աճել են համապատասխանաբար 23.3%-ով և 80.4%-ով: Ընդ որում, ոչ ռեզիդենտների վարկերի ծավալների՝ նման բարձր աճը պայմանավորված է բազային էֆեկտով՝ նախորդ տարվա նույն ամսին գրանցված անկմամբ:

[9] Վարկերի վերաբերյալ մայիս ամսվա վիճակագրական տվյալները ոլորտային դասակարգմամբ դեռևս չեն հրապարակվել:

Գծապատկեր 18. Վարկերի 12-ամսյա աճերը՝ ըստ վարկառուների ռեզիդենտության, %



Գծապատկեր 19. Ռեզիդենտներին տրված վարկերի 12-ամսյա աճը, %



Ռեզիդենտներին տրամադրված վարկերի կազմում աճել են ինչպես իրավաբանական անձանց, այնպես էլ տնային տնտեսություններին տրամադրված վարկերը: 2026թ. մայիսին իրավաբանական անձանց վարկերի աճը կազմել է 25.3%՝ արագանալով ապրիլի համեմատ, իսկ տնային տնտեսություններին տրամադրված վարկերի աճը կազմել է 21.2%՝ նույնպես արագանալով նախորդ ամսվա համեմատ: Վարկերի աճին երկու խմբերն էլ շարունակել են ունենալ գրեթե համաչափ դրական նպաստում:

6.4. Դրամական փոխանցումներ

Գծապատկեր 20. ՀՀ բանկերի միջոցով իրականացվող դրամական փոխանցումների զուտ ներհոսքը, մլն ԱՄՆ դոլար[10]



Արտերկրից դեպի ՀՀ փոխանցվող դրամական միջոցների զուտ ներհոսքը շարունակում է աճել: Դրամական միջոցների զուտ ներհոսքը 2026թ. ապրիլին կազմել է 269.9 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա ապրիլի 129.7 մլն ԱՄՆ դոլարի դիմաց: Կուտակային՝ հունվար-ապրիլ ամիսների աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ կազմում է շուրջ 2.7 անգամ, ինչը պայմանավորված է ինչպես արտահոսքի կրճատմամբ (շուրջ 10.0%), այնպես էլ ներհոսքի աճով (շուրջ 17.2%):

7. ԱՄՓՈՓՈՒՄ

1. 2026թ. մայիսին տնտեսական ակտիվության աճն էականորեն արագացել է՝ հասնելով 11.7%-ի, ինչի արդյունքում հունվար-մայիս ամիսների կուտակային աճը կազմել է 8.0%, սակայն աճի կառուցվածքը շարունակում է պարունակել կայունության ռիսկեր: Աճի հիմնական աղբյուրներն են եղել արդյունաբերությունը, ծառայությունները, ինչպես նաև շինարարությունը: Արդյունաբերության նպաստումը զգալիորեն պայմանավորված է եղել

[10] Ներկայացված է ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից մուտք եղած և ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկիր կատարված ընդամենը ամսական փոխանցումները և դրանց տարբերությունը՝ ԱՄՆ դոլարով:
2026թ. մայիս ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

հանքարդյունաբերությամբ և վերաարտահանման տարրեր պարունակող ենթաոլորտներով, որոնց հետագա աճի հնարավորություններն անորոշ են:

2. Շինարարության ոլորտում բարձր աճը ոչ միայն պահպանվել է, այլև մայիսին որոշակիորեն արագացել է: Հունվար-մայիս ամիսներին շինարարության ծավալներն աճել են 24.1%-ով՝ չնայած նախորդ տարվա բարձր բազային և Երևանի մասով հիպոթեքային վարկերի տոկոսավճարների վերադարձի ծրագրի աստիճանական ավարտից բխող սպասումներին: Շինարարության բարձր աճը, վարկավորման շարունակական ընդլայնման հետ համատեղ, աջակցում է ներքին պահանջարկին, սակայն միաժամանակ պահանջում է անշարժ գույքի շուկայի հետագա զարգացումների և հնարավոր ռիսկերի մշտադիտարկում:

3. Արտաքին առևտրի դինամիկան շարունակում է մնալ անկայուն: Մայիսին արտահանումը նվազել է 11.5%-ով, իսկ հունվար-մայիս ամիսների կուտակային անկումը կազմել է 3.7%: Արտահանման նվազումը հիմնականում պայմանավորված է թանկարժեք քարերի և մետաղների ապրանքախմբի արտահանման կրճատմամբ, մինչդեռ հանքահումքային արտադրանքի բարձր աճը զգալիորեն մեղմել է անկումը: Ներմուծման կուտակային աճը դանդաղել է մինչև 2.2%: Այս զարգացումները ցույց են տալիս, որ արտաքին առևտրի ցուցանիշները շարունակում են մեծապես կախված մնալ առանձին ապրանքախմբերից և վերաարտահանման հետ կապված գործոններից:

4. Հարկաբյուջետային հատվածում եկամուտների աճն արագացել է, մինչդեռ ծախսերի աճը զգալիորեն դանդաղել է: Հունվար-մայիս ամիսներին պետական բյուջեի եկամուտներն աճել են 14.7%-ով, իսկ ծախսերը՝ 4.5%-ով, ինչի արդյունքում ձևավորվել է 95.8 մլրդ դրամ հավելուրդ: Սակայն ծախսերի կառուցվածքը շարունակում է մտահոգիչ մնալ: Այսպես՝ ընթացիկ ծախսերն աճել են 15.2%-ով, մինչդեռ կապիտալ ծախսերը կրճատվել են 46.8%-ով: Հետևաբար, բյուջեի հավելուրդը զգալի չափով պայմանավորված է կապիտալ ծախսերի թերակատարմամբ և ինքնին չի վկայում ծախսային քաղաքականության արդյունավետության բարելավման մասին: Ավելին՝ կապիտալ ծախսերի իրականացման կարողությունների հարցը, որը տնտեսության զարգացման առանցքային գործոններից է, դեռևս մնում է չլուծված:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: